N1387

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՅԵՎ ԱՎԻԱՑԻՈՆ-ՔԻՄԻԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

...ТИТУТА
...Наук
...ССР

*Կանոնադրությունը գրանցված է Ադըր-բեջանի Ներքին Գործերի Ժողկոմատում № 177. — 1927 թ. դեկտեմբերի 27-ին*

355
Դ-94

Гостипография „Красный Восток" Бакполиграфа.
Баку. Карантинная, 84.
Главл. 1276. Зак. 4564—2000

Ա
Ձ2418
355
Դ—94
1928 MAR 2010

*Հաստատված է Ադրբեջանի ՈՍՈ-Ավիախիմի 1927 թ. նոյեմբերի 18-ի պլենումում:*

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՎԻԱՑԻՈՆ-ՔԻՄԻԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Библиотека Института Востоковедения Академия Наук СССР

## 1. Ընդհանուր կանոնադրություն

### § 1.

*Խորհրդային Ադրբեջանի ՈՍՈ-Ավիախիմը կազմված է, նպատակ ունենալով կազմակերպել հասարակական կամավոր աջակցության՝ յերկրի պաշտպանության և ռազմական, ավիացիոն և քիմիական կուլտուրաները և զինվորական գիտելիքները աշխատավոր լայն մասսաների մեջ տարածելու համար, վորի համար նրան իրավունք է տրվում Ադրբեջանում կազմակերպել իր մասնաճյուղերը — Ընկերություններ, բաժանմունքներ և բջիջներ:*

### § 2.

*Խորհրդային Միության և Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի Ընկերությունների կանո-*

ՀՍՍՌ-Ակն. ССР
610049-67

40.791
20 NOV 2013



նադրությունների համաձայն՝ Խորհրդային Ադրբեջանի ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունը իրավունք ունի.

ա) աջակցել Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ռազմական հզորության բազմակողմանի ամրապնդման և պետական, հասարակական և կոոպերատիվ կազմակերպությունների ու հիմնարկությունների ամբողջ աշխատանքին, վորը ուղղված է լինելու ժողովրդական տնտեսության այն ճյուղերի զարգացման համար, վորոնցով ապահովվում է Խորհրդային Միության պաշտպանության հնարավորությունները.

բ) աջակցել խորհրդային, զինվորական, ավիացիոն և քիմիական արդյունաբերությանը և վոչ-զինվորական արդյունաբերության այն ճյուղերին, վորոնք վճռական նշանակություն ունեն յերկրի պաշտպանության գործում, մասնավորապես, ստանդարտային արտադրություն ստեղծելու, վորը հնարավոր կլինի օգտագործել ռազմական գործադրության համար.—կառուցել և պատրաստել ոդանավեր, ավիամոտորներ և այլն. ուսումնասիրել յերկրի քիմիական հում նյութերի հնարավորությունները, քիմիական արտադրության սպառման ընդարձակումը, ամենայն կերպ աջակցել դրանց պահանջի և սպառման խոշորացմանը և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում նրանց բազմակողմանի գործադրությանը: Աջակցել այերո-կայանների և ոդային գծերի կազմակերպելուն և մասնակցել նրանց շահագործման մեջ. աջակցել զինվորական, ավիացիոն և քիմիական գործարանների ստեղծելուն, կազմակերպել գյուղատնտեսական ցուցադրական հողաբաժիններ՝ հանքային պարարտացում [illegible] կազմակերպել և աջակցել

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
61049-67



դաշտերի, բանջարանոցների, անտառների և այլն վնասատուների դեմ ավիախիմ պայքար մղելուն, աջակցել ռազմա-քիմիական, ավիացիոն, ոդագնաց և քիմիական զանազան մասնագետների վորակի բարձրացնելուն, նույնպես և Խորհրդային Ադրբեջանի պաշտպանությանը աջակցելուն և ավիացիոն-քիմիական կառուցման գաղափարը տարածել՝ համաձայն Խորհրդային Միության ժամանակակից քաղաքական և տնտեսական խնդիրների.

գ) աջակցել Խորհրդային Միության պաշտպանելու ամրապնդման համար տարվող գիտական-հետախուզական աշխատանքներին՝ թեորետիկ պրոբլեմների բնագավառում, կառուցել գիտական և ուժանդակ հիմնարկություններ, վորոնք անմիջական կապ ունեն յերկրի պաշտպանության և ավիացիոն ու քիմիական շինարարության հետ, աջակցել համապատասխան հիմնարկությունների աշխատանքներին և այդ բնագավառում յեղած գյուտերը խրախուսել, նույնպես և «Ո Ս Ո - Ա վ ի ա խ ի մ» Ընկերության հանձնաժողովներ ու սեկցիաներ կազմակերպել՝ մանրամասն քննելու և մշակելու այն առանձին ճյուղերը, վորտեղ կարելի է գործադրել ավիացիան, ոդագնացությունը և քիմիան՝ ինչպես ռազմական, նույնպես և խաղաղ նպատակների համար.

դ) աջակցել զինվորական, ավիացիոն, ոդագնաց և քիմիական մասերին, դպրոցներին, գործարաններին և այլն.

յե) աջակցել արդյունաբերության, տրանսպորտի, կապի, քաղաքացիական դպրոցների և բարձրագույն դպրոցների ռազմականացմանը.

գ) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի
ղեկավար օրգանների ձեռք առած համապատասխան
միջոցների հետ միասին, պետք է աջակցել ռազմա-
կան և ռազմա-քաղաքական աշխատանքներ զարգաց-
նել նույնպես և բանվորա-գյուղացիական կարմիր
բանակայինների կազմի մեջ.

ե) տարածել և պրոպագանդա անել ռազմական,
ավիացիոն և քիմիական գիտելիքներն ու վարժու-
թյունները Ադրբեջանի Հանրապետության ժողովուրդ-
ների և բանվորա-գյուղացիական լայն մասսաների
մեջ, ներս քաշելով նրանց ՈՍՈ-Ավիախիմ Ընկերու-
թյան շարքերի ակտիվ աշխատանքի մեջ.

ը) մասնակցել և կազմակերպել ցուցահանդեսներ,
համագումարներ և խորհրդակցություններ՝ նվիրված
պինվորական գործին, ավիացիային, օդագնացությանը
և քիմիային.

թ) կազմակերպել խմբակային և խմբային աշ-
խատանքներ, գրույցներ, դեկուցումներ, միտինգներ,
էքսկուրսիաներ, փորձադաշտեր, զինվորական խաղեր
և վարժություններ, հրացանաձգություն, մրցումներ
և փորձեր, լաբորատորական գործնական աշխատանք-
ներ, ցույցեր, քիմիական ցուցադրական փորձեր և
գրոհումներ, օդանավերի օգնությամբ թռիչքներ և
այլն, նույնպես և սահմանել պարգևատրումներ, թռ-
չակներ և այլն.

ժ) աջակցել օդային սպորտի զարգացմանը—այն-
բոլլանի, թեթև մոտորային, ավիացիոն, օդագնա-
ցային, պլաներային, մոդելային, օդաճինների, այն-
րո-սահնակային, գլխսերային և այլն,—կազմելով
փորձեր, մրցումներ և այլն, նշաններ և դիպլոմներ



տալով, նույնպես և մասնակցել համամիութենական
և անդրկովկասյան մրցանակներին, կոնկուրսներին և
այլն.

ժա) աջակցել հրացանաձգության, ավտոմոբի-
լային, հեծանիվային, և սպորտի ուրիշ տեսակներին,
ֆիզիքական կուլտուրային և կազմակերպել այդ հար-
ցերին նվիրված ցուցահանդեսներ, համագումարներ,
խորհրդակցություններ, մրցումներ և այլն.

ժբ) ունենալ իր նյութական ու դրամական մի-
ջոցները՝ Ադրբեջանի Հանրապետության տերրիտո-
րիայում Անդրկովկասյան ՈՍՈ-Ավիախիմի (Խորհր-
դային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների
Միության) գործունեության ընդհանուր պլանը
կյանքի մեջ կիրառելու համար և շահագործել կամ
մասնակցել՝ ռազմա-ավիացիոն և քիմիական արդյու-
նաբերության ձեռնարկությունների առևտրական
սկզբունքով շահագործմանը.

ժգ) վարձու հիմունքներով ձեռք բերել վարպես
սեփականության՝ ամենայն տեսակ կայք, նրանց թը-
վում և ավիացիոն, օդանավեր և ապարատներ գրավ
դնել և սեփականությունից հանել իր կայքը, դնա-
գան կայքային համաձայնություններ ու գործարքներ
կապել, տալ ամենայն տեսակի գրավոր պարտավորու-
թյուն, նրանց թվում և մուրհակային, դատական պա-
հանջ ներկայացնել, պատասխանել դատարաններում
և առհասարակ կատարել ամենայն տեսակ իրավական
գործողություններ, վոր կապ ունի Ադրբեջանի Հան-
րապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության գործու-
նեության հետ.

ժդ) Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի

(Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միության) և օրենքով թույլատրված կարգով, կատարել կամավոր հանգանակություններ ու նվիրատվություններ և կամպանիա անցկացնել Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության նյութական դրությունը ուժեղացնելու համար։

§ 3.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության գործունեությունը տարածվում է ամբողջ Ադրբեջանի տերրիտորիայում և իրավունք է տրվում Անդրկովկասյան ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության (Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միության) և գոյություն ունեցող օրենքների թույլատվությամբ կամավոր նվիրատվություններ և նվերները ժողովել Խորհրդային Միության պաշտպանությունը ուժեղացնելու համար և նրա ամեն տեսակի ավիացիոն և քիմիական շինարարությանը աջակցելու, իրավունք ունենալով տարածել անդամակցական տոմսեր, անդամակցական նշաններ, դրոշակներ, ժետոններ և պրոպագանդայի ամենայն տեսակ իրեր ու հրատարակություններ, որոնք կրում են Խորհրդային Անդրկովկասի (Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միության) ՈՍՈ-Ավիախիմի հաստատված «ՈՍՈ-ԱՎԻԱԽԻՄ» կրող մակագրությունները։



§ 4.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունը օգտվում է կնիքով, դրոշակով, անդամակցական տոմսով (անհատական համարակալություն) և անդամակցական միակ նշանով, որը հաստատված է ամբողջ Խորհրդային Միության համար (Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության կանոնադրության § 4)։

§ 5.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունը օգտվում է իրավական անձի բոլոր իրավունքներով։

Ծանոթություն.—1) Ադրբեջանի ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունը և նրա տեղական կազմակերպություններն ու օրգանները օգտվում են այն բոլոր արտոնություններով ու առավելություններով, որը տրված են այն պետհիմնարկներին, որոնք գտնվում են պետբյուջեյի վրա և ազատվում են տուրքերից, իսկ պրոպագանդիստական և հրատարակչական ձեռնարկները ազատվում են յեկամտային և արհեստային հարկերից։

Ծանոթություն.—2) Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունը, նրա ձեռնարկները և նրա տեղական միացյալ կազմակերպությունները ա-

պատվում են տեղական բոլոր տեսակի հարկերից, մուծումներից և մաքսերից, իսկ նրանց կազմակերպված հանդեսներն ու զվարճությունները հօգուտ «Կարմիր Կիսալուսնի» ակտսային վճառումից:

Ծանոթություն.—*Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունը, նրա տեղական կազմակերպություններն ու օրգանները ազատվում են դատարանական և նոտարական հարկերից ու տուրքերից:*

Ծանոթություն.—4) *Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության և նրա տեղական կազմակերպությունների, օրգանների և ձեռնարկների ծառայողներն ու բանվորները համահավասարվում են պետական հիմնարկների ու ձեռնարկների ծառայողներին ու բանվորներին:*

## II. Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության կազմը.

### § 6.

*Ադրբեջանի ջանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության անդամները կարող են լինել.—ֆիզիկական անձինք (Խորհրդային Միության պաշտպանության և ավիացիոն-քիմիական կառուցման իսկական անդամներ և պատանի բարեկամները) և իրավական անձինք։*



### § 7.

*Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության իսկական անդամները կարող են լինել Խորհրդային Միության բոլոր քաղաքացիները, վորոնք Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության հիման վրա ոգտվում են ընտրական իրավունքով և 14 տարեկան հասակ ունեցող պատանիները։*

### § 8.

*Այն անձինք, վորոնք զրկված են Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության հիման վրա ընտրական իրավունքներից, չեն կարող ընդունվել վորպես իսկական անդամ, բայց կարող են Խորհրդային Միության ավիախիմշինարարության ու պաշտանության գործին աջակցել նվիրատվությամբ, պարբերական և պատահական վճարումներով և այլն, վորի համար նրանց կարող են տրվել գրություններ ու ժետոններ, և կհրատարակվեն մամուլի օրգաններում:*

### § 9.

*Այն քաղաքացիները, վորոնք չեն հասել 14 տարեկան հասակին, կարող են լինել Խորհրդային Միության պաշտպանության և ավիախիմշինարարության պատանի բարեկամներ։*

### § 10.

*Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության անդամ կարող են լինել Խորհրդային*

*հիմնարկները, ձեռնարկները, կազմակերպությունները և այլ իրավական անձինք, նույնպես և խառն՝ խորհրդային կապիտալը գերակշռող ընկերությունները։*

Ծանոթություն. *Այն իրավական անձինք, վորոնք չեն համապատասխանում սույն կանոնադրության պահանջներին, կարող են Ընկերության անդամ դառնալ Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի նախագահության դրա համար թույլատրված առանձին վորոշումով:*

§ 11.

*Ընկերության անդամ լինելը կատարվում է Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության տեղական կազմակերպությունում գրանցվելով։ Անդամների ընդունելությունը ղեկավարում են տեղական կազմակերպությունների նախագահությունները կամ Ընկերության բջիջների բյուրոները։*

**III. Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության անդամների իրավունքներն ու պարտականությունները.**

§ 12.

*Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության ամեն մի խսկական անդամ ոգտվում է հետևյալ իրավունքներով.*

*ա) Ընկերության անդամների ժողովներում վճռական ձայնի իրավունքով և կարող են ընտրել և ընտրվել Ընկերության տեղական կազմակերպության բոլոր ղեկավար պաշտոններում և գործուղվել վորպես պատվիրակ համամիութենական, Անդրկովկասյան և հանրապետական ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության համագումարներին.*

*բ) իրավունք ունի կազմակերպված էքսկուրսիայի միջոցով նայել Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկ. քաղաքացիական այերոկայանները, քիմիական լաբորատորիաները և փորձադաշտերը, արհեստանոցները, գործարանները, և այլ հիմնարկությունները.*

*գ) իրավունք ունի մասնակցել Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության, Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության և Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միության համապատասխան մրցումներին.*

*դ) իրավունք ունի Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության աջակցությունը ստանալ զինվորական, քաղաքացիական, ավիացիոն, ոդագնացային, քիմիական և բարձրագույն դպրոցները մտնելու համար. այդ դեպքում Ընկերության անդամները պարտավոր են բավարարել այդ դպրոցներում յեղած ընդհանուր պայմաններին և կանոններին.*

*յե) իրավունք ունի ոգտվելու արտոնյալ հիմունքներով Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության, Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի Ընկերության և Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմի Ընկերությունների Միության կազմակերպված գրադարաններից, թանկարաններից,*

ցույցահանդեսներից, դասախոսություններից և այլն.

գ) իրավունք ունի կրծքի վրա կրել այն նշանը, որը հատկացրված է ՈՍՈ-Ավիախիմի Ընկերության անդամների համար.

ե) իրավունք ունի հրապարակ գալ Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության անունից, ընկերության նախագահության կամ տեղական կազմակերպության կամ Ընկերության բջիջների բյուրոյի թույլատրությամբ, որ ամեն անգամ ստացվում է առանձին.

ը) իրավունք ունի Խորհրդային Միության օդային հաղորդակցության ուղիներով ճամբորդելու տոմսը զեղչով ստանալ.

թ) իրավունք ունի զեղչով ստանալ ՈՍՈ-Ավիախիմի և զինվորական հրատարակչությունների հրատարակությունները.

ժ) իրավունք ունի Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունից աջակցություն ստանալ հետախուզական և գյուտ անելու աշխատանքների համար:

Բացի դրանից, ՈՍՈ-Ավիախիմի անդամները երբ պարտադիր զինվորական ծառայություն են մտնում, զորամասերում, տեղավորվելու ժամանակ հաշվի է առնվում թե նրանք ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության կազմակերպված ինչպիսի կուրսեր, սեմինարներ են անցել, և նրանց մասնակցությունը զինվորական գիտելիքների խմբակներում, հրացանաձիգ և ավիոխիմ խմբերում և այլն:

Զինվորական ծառայող ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության անդամները իրավունք ունեն կրծքի վրա կրել Ընկերության նշանը:



§ 13.

Խորհրդային Միության պաշտպանության և ավիոքիմկառուցման պատանի բարեկամները ոգտվում են Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության իսկական անդամների բոլոր իրավունքներով, բացի այն իրավունքները, որը հիշված են ներկա կանոնադրության § 12 «ա», «գ», «ժ» կետերում: Բացի դրանից Ընկերության ժողովներին և խորհրդակցություններին նրանք ոգտվում են խորհրդակցական ձայնով:

§ 14.

Իրավական անդամները — Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության անդամները — իրավունք ունեն իրենց ներկայացուցիչները ուղարկել Ընկերության խորհրդակցություններին, կոնֆերանսներին և տեղական կազմակերպության համապատասխան սեկցիայի այն իրավունքներով, որը հիշված են սույն կանոնադրության § 12 «ա», «դ» կետերում:

Ծանոթություն. — Ներկայացուցիչների թիվը որոշվում է ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության տեղական կազմակերպության նախագահությունը՝ համաձայնության գալով համապատասխան իրավական անձի հետ:

§ 15.

Ընկերության ամեն մի անդամ, իր վրա առնելով Խորհրդային Միության պաշտպանության և ավիո-

խիմշինարարության պատվարժան և պատասխանատու կոչումը պարտավոր է յենթարկվել դիսցիպլինային. բացի մշտապես անդամակցական վճար տալուց պարտավոր է.

ա) ակտիվ կերպով աշխատել Ընկերության իր բջիջում, անմիջական մասնակցություն ունենալ բջջի, խմբակի ընդհանուր ժողովներում և նրա ուրիշ գործնական կազմակերպությունների մեջ և որինակ ծառայել ընկերությունից դուրս գտնվող մասսայի համար՝ իր գործնական աշխատանքով, իսկ ընկերության ղեկավար որգանների կազմի մեջ իր ընտրվելու դեպքում—իսկական մասնակցություն ունենալ նրանց աշխատանքներում.

բ) բարձրացնել իր զինվորական, ավիացիոն, ոդագնացային և քիմիական գիտելիքները.

գ) ագիտացիա մղել աշխատավորների մեջ՝ Ընկերության շարքերը մտնելու համար.

դ) աջակցել Ընկերությանը և Ընկերության իր բջիջում դրամական միջոցների հավաքելուն, հանգանակություն, դասախոսություններ, ներկայացումներ կազմակերպելու միջոցով և այլն:

Ծանոթություն.—Հանգանակություն և ուրիշ դրամական միջոցները ժողովելը կարող են կատարել միայն ՈՍՈ-Ավիախիմի անդամները, միայն ամեն անգամ ընկերության ղեկավար որգանների և նրա տեղական կազմակերպությունների, մինչև բջիջի բյուրոյի առանձին հանձնարարությամբ:



§ 16.

ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության ֆիզիքական անդամների համար անդամավճարը վորոշվում է.—մուտքի—20 կոպ. աշխատավորների բոլոր տեսակ կարգերի համար, բացառությամբ կարմիր-բանակայինների, ուսանողների և գործազուրկների, վորոնցից անդամակցական մուտքի վճար ամենևին չի վերցնվում, տարեկան՝ նայած ամեն մի անդամի նյութական ապահովությանը.—

ա) անդամակցական վճար 1 ր. 20 կոպ. մուծում են բանվորները, ծառայողները և Բանվորա-Գյուղացիական Կարմիր-Բանակի հրամքաղկազմը և ուրիշները, վորոնք չեն մտնում «բ», «գ» և «դ» խմբակների մեջ.

բ) անդամակցական վճար 60 կոպ. վճարում են այն բանվորներն ու ծառայողները, վորոնց աշխատավարձը ամիսը 75 ռուբլուց ավելի չի լինում.

գ) անդամակցական վճար 30 կոպ. վճարում են գյուղացիները և բարձրագույն դպրոցների ուսանողները.

դ) անդամակցական վճար 10 կոպ. վճարում են պրոֆ. և աշխատավորական դպրոցների ու ֆաբզավուչների աշակերտները, կարմիր-բանակայինները, բատրակները, ինվալիդները, գործազուրկները և պիոներները:

Անդամակցական վճարների ժամանակամիջոցը վորոշված է.—«ա» կետում հիշվածները տարեկան վճարում են 4 անգամ, «բ», «գ» և «դ» կետերում հիշվածները—տարեկան 2 անգամ:

ՌՍՌ-Ավիախիմ Ընկերության իրավական անդամների համար, վորպես մուտքի, նույնպես և տարեկան վճարը վորոշվում անհատական համաձայնությամբ. իսկ անդամակցական վճարի չափը վորոշվում է Ադրբեջանի Հանրապետության ՌՍՌ-Ավիախիմ Ընկերության կամ նրա տեղական կազմակերպության նախագահությունը:

§ 18.

Անդամակցական տոմս տրվում է մուտքի և անդամի տարեկան վորոշած գումարի առաջին մասը վճարելուց հետո:

§ 19.

Ադրբեջանի Հանրապետության ՌՍՌ-Ավիախիմ Ընկերության անդամը Ընկերության կողմից հեռացրված է համարվում.—

ա) իր հեռանալու մասին հայտարարություն տալու դեպքում.

բ) 12 ամիս անդամակցական վճար չվճարելու դեպքում.

գ) աշխատունակությունը կորցնելու հետևանքով, վորը պահանջվում է ընկերության անդամների շարքը մտնելու համար (կանոնադրության § 7).

դ) վորևե անվայել արարք կատարելու դեպքում, յերբ ընկերության տեղական կազմակերպության համապատասխան նախագահությունը կամ բջիջի բյուրոն է վորոշում:

Ծանոթություն.—1. Անդամների հեռացնելու գործը վարում է Ընկերության բջիջի բյուրոն, բայց հեռացրված անդամին

6/049-67



թույլ է տրվում բողոքարկել Ընկերության համապատասխան օրգաններում, բայց միայն հանրապետական և ինքնավար—շրջանային. Նա տալիս է գրավոր բողոք այն բջիջի բյուրոյին, վորը վորոշել է նրան հեռացնել: Բջիջի բյուրոն պարտավոր է այդ բողոքը իր բացատրության հետ միասին մի շաբաթվա ընթացքում իր ռայոնական, գավառական կամ ինքնավար-շրջանային բաժանմունքի միջոցով ուղարկել Հանրապետական Ընկերությանը, վորը իր վորոշումը անմիջապես հայտնում է այն բջիջի բյուրոյին, վորը վորոշել է հեռացնել, նույնպես և բողոքարկուին՝ իր բողոքի մեջ հիշված հասցեով:

Ծանոթություն.—Այն անդամները, վորոնք 12 ամիս շարունակ չեն մտցրել անդամակցական վճարը, կարող են վերականգնվել իրենց իրավունքներում Ընկերության բջիջի բյուրոյի կողմից՝ չվճարած անդամակցական վճարը լրիվին վճարելուց հետո:

§ 20.

Ադրբեջանի Հանրապետության ՌՍՌ-Ավիախիմի Ընկերության անդամները, վորոնք կամավոր կերպով հեռացել են Ընկերությունից, նույնպես և նրանից հեռացվածները, իրավունք չունեն հետ պահանջել Ընկերությանը վճարած վճարները, նույնպես և կորցնում են Ընկերության անդամի իրավունքները և բացի դրանից զրկվում են ՌՍՌ-Ավիախիմ Ընկերության անդամների նշան կրելու իրավունքից:

ГСС Библиотека ZUUՌ-Арм.ССР им. А. Мясникяна [illegible]
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА [illegible]

### IV. Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության ղեկավար օրգանը.

§ 21.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության ղեկավար օրգաններն են հանդիսանում.

ա) Ընկերության հանրապետական համագումարը.

բ) Ընկերության խորհուրդը.

գ) Ընկերության խորհրդի նախագահությունը.

### ա) Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության հանրապետական համագումարը.

ՈՍՈ-Ավիախիմի Ընկերության հանրապետական համագումարը հանդիսանում է Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության բարձրագույն օրգանը և հրավիրվում է Ընկերության խորհրդի կամ նրա նախագահության ձեռներեցությամբ կամ Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի պահանջով, կամ մի յերրորդից վոչ պակաս Ընկերության տեղական կազմակերպությունների գրավոր հայտարարությամբ, բայց վոչ շուտ, քան 2 տարին մի անգամ։

§ 23.

ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության Ադրբեջանի համագումարի հրավիրելու ժամանակը, տեղը և ռեգլամենտը վորոշում է Ընկերության խորհուրդը կամ նրա նախագահությունը։ Համագումարի օրակարգը հայտարարվում է Ադրբեջանի կառավարչական լրագրում վոչ ուշ, քան համագումարից մի ամիս առաջ։



§ 24.

ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության Ադրբեջանյան Հանրապետական Համագումարը կազմվում է Ընկերության տեղական կազմակերպությունների պատվիրակներից, վորոնք ընտրվում են ինքնավար հանրապետական համագումարներում ու ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության գավառական ու ռայոնական կոնֆերանսներում։

Ներկայացուցչության նորման վորոշվում է Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհուրդը կամ նրա նախագահությունը։

§ 25.

ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության Հանրապետական Համագումարի հարցերն լինելու են.

ա) Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության կանոնադրության փոփոխության յենթարկելու հարցերի քննությունը, վորին հետևելու է Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության համաձայնությունը և գրանցումը, նույնը և ներկայացվում է Ադրբեջանի Հանրապետության Ներքին Գործերի Ժողկոմատին հաստատության և գրանցման համար.

բ) Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումների և հաշվետվությունների քննությունն ու հաստատումը.

գ) Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի ընտրությունը.

յե) Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության գործերի վերաբերմամբ բոլոր հար

ցերի վճռումն, վորոնք հանրապետական համագումարը իր իրավասության ներքո կգտնի, սակայն, պետք է խիստ համաձայնեցրած լինի (Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի և Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միության) կանոնադրությունների և ներկա ընդհանուր կանոնադրության հետ:

Ծանոթություն.—Համագումարի վորոշումները սույն «գ» կետում բացատրված հարցերի նկատմամբ, նույնպես և համագումարի իրավասության ընդլայնման հարցը համաձայն սույն «դ» կետի, ընդունվում է համագումարին յեկած պատվիրակների ձայների յերկու-յերրորդ մեծամասնությամբ: Ուրիշ հարցերի վերաբերմամբ՝ համագումարում ներկա գտնվող պատվիրակների ձայների հասարակ մեծամասնությամբ:

## բ. Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհուրդը.

§ 26.

ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհուրդը ընտրվում է ՈՍՈ-Ավիախիմի հանրապետական համագումարում՝ վոչ շուտ, քան 2 տարին մի անգամ և այնքան հոգուց բաղկացած, վորքան վոր համագումարը կվորոշի:

§ 27.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմի խորհուրդի նիստերը կայացած են համարվում Ընկե-



րության խորհրդի կեսից վոչ պակաս անդամների ներկայությամբ: Ընկերության խորհրդի վորոշումները ընդունվում են ձայների հասարակ մեծամասնությամբ:

§ 28.

ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության հանրապետական համագումարների միջին ժամանակաշրջանում Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհուրդը հանդիսանում է Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության բարձրագույն որգանը և նրա ղեկավարությունն են յենթակա.

ա) Ընկերության խորհրդի նախագահության գործունեությունը ղեկավարելը.

բ) Ընկերության խորհրդի նախագահության հաշվետվությունների և զեկուցումների քննությունն ու հաստատումը.

գ) Ընկերության առաջիկա տարվա գործունեության նախագծի ու ֆինանսական յենթադրությունների հաստատումը, վորոնք համաձայնեցրած են լինելու Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի հետ.

դ) հաստատված ընդհանուր ծրագրի աշխատանքները իրագործելու վրա հսկողություն ունենալը և Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի (Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միության) վորոշման համաձայն համամիութենական բնույթ կրող միջոցներ անցկացնելը.

յե) մտցնել Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության նախագծի այն փոփոխությունները վորոնք հաստատված ու համաձայնեցրված են Խոր-

հրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի աշխատանքների ընդհանուր նախագծի հետ, և համաձայնեցրված են Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի խորհրդի կամ խորհրդի նախագահության հետ։

Իր գործունեյության մեջ Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունը ղեկավարվում է Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի կանոնադրությամբ (և Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միության), սույն կանոնադրությամբ և Խորհրդային Անդրկովկասի (ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միության) և Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության հանրապետական համագումարների վորոշումներով։

§ 29.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի պլենումը հրավիրվում է նրա նախագահության նախաձեռնությամբ կամ Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի մի յերրորդական անդամների գրավոր հայտարարությամբ, կամ Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի պահանջով, բայց տարվա ընթացքում յերկու անգամից վոչ պակաս։

§ 30.

Ադրբեջանի Հանրապետության . ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի անդամները պարտավոր են վորպես Ընկերության բարձրագույն գործադիր որգանի անդամներ, Ընկերության գործունեության ղե-



կավարության մեջ ակտիվ մասնակցություն ունենան տեղերում՝ խորհրդի և նրա նախագահության տված դիրեկտիվների ու միջոցների գործադրողը պիտի լինեն ու նրանց վորոշումների ու առանձին հանձնարարությունների իրագործողը։

Խորհրդի անդամները իրավունք ունեն մասնակցել վճռական ձայնով Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության տեղական կազմակերպությունների ղեկավար մարմինների բոլոր նիստերին։

Ծանոթություն.—Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության տեղական կազմակերպությունների խորհրդների անդամները իրավունք ունեն մասնակցելու Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի և նրա նախագահության նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով։

## գ. Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի նախագահություն.

§ 31.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի պլենումը իր միջից ընտրում է նախագահություն այն կազմով՝ վորը վորոշում է Ընկերության խորհուրդը, վորը տվյալ խորհրդի կազմի լիազորության շրջանում հանդիսանում է Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության բարձրագույն որգան։

§ 32.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի նախագահը և նրա փոխանորդները ընտրում են Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի պլենումում, իսկ նախագահության և խորհրդի պատասխանատու քարտուղարը ընտրում է Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի նախագահությունը և դրա համաձայն հանդիսանում են նախագահության անդամներ և միևնույն ժամանակ Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության և նրա խորհրդի նախագահ, փոխ-նախագահ և պատասխանատու քարտուղար։

§ 33.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության նախագահության խորհրդի նիստերը կայանում են խորհրդի նախագահության կեսից վոչ պակաս անդամների ներկայությամբ և հրավիրվում են վոչ պակաս քան ամիսը 1 անգամ: Նախագահության հրավիրելու իրավունքը պատկանում է նախագահին, փոխ-նախագահին և պատասխանատու քարտուղարին, նույնպես և Ընկերության վերաքննիչ հանձնաժողովին: Ընկերության խորհրդի նախագահության վորոշումները ընդունվում են ձայների հասարակ մեծամասնությամբ:

§ 34.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի նախագահության գործունեության են վերաբերում.



ա) Ընկերության տեղական կազմակերպությունների ցանցի միացումը, ղեկավարությունը և նրանց գործունեությանը ուղղություն տալը.

բ) Ընկերության ամբողջ գործերի վարելը, համաձայն աշխատանքների ընդհանուր նախագծի, վորը համաձայնեցրված է Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի հետ, համամիութենական բնույթի բոլոր միջոցների կիրառումը Ադրբեջանի Հանրապետության մեջ՝ համաձայն Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի (Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միություն) ղեկավար որգանների վորոշման.

գ) առաջիկա գործառնական տարվա համար աշխատանքների նախագիծը և ֆինանսական յենթադրությունները մշակել.

դ) ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների հետ կապ պահպանել ինֆորմացիոն, հրատարակությունների, կոչերի, պլակատների, բյուլլետենների և այն նյութերի փոխանակության միջոցով, վորով նրանք անց են կացնում աշխատանքը համապատասխան յերկրամասում.

յե) կառավարել Ընկերության բոլոր գործերը, կայքը, հիմնարկները, ձեռնարկները և միջոցները և իրականացնել Ընկերության իրավունքներն ու ֆունկցիաները՝ վորպես իրավական անձնավորություն, համաձայն սույն կանոնադրության §§ 2, 3 և 5 կետերի.

զ) ընդունում է անդամավճարները, նյութական ոժանդակությունները, նվիրատվությունները և առհասարակ, դրամական գումարները, ոբլիգացիաները, փոխառությունները, արժեքավոր բաները և այլն, վո-

րոնք մտնում են Ընկերության դրամարկղը՝ ընթացիկ հաշվով և ստացվում են վարկային և փոստային հիմնարկներից. դրամական գումարները՝ ընթացիկ հաշվից, տալիս և հետ են ընդունում օբլիգացիաները, փոխառությունները, արժեքավոր թղթերը, ստանում են օբլիգացիայով տրված գումարները, դիվիդենդները և ակցիաների ու արժեքավոր թղթերի տոկոսները, վարկ է ստանում վարկային հիմնարկություններում, նույնիսկ պետբանկում, պետական տոկոսաբեր թղթեր և ուրիշ կայք գրավ դնելով, ստանում է ապահովագրական վարձատրությունները և այլն.

ե) պահում է հաշիվները, կազմում ու հաստատում է տարվա նախահաշիվները ու բալանսը։

Ծանոթություն.—Հաստատված բալանսները ուղարկվում են Խորհրդային Անդրկովկասի ՈՍՌ-Ավիախիմի խորհրդի նախագահությանը ի գիտություն և հայտարարվում է տեղական կառավարական լրագրում.

ը) Ընկերության անունից ամենուրեք և հիմնարկություններում, առանց բացառության և կառավարական և դատական տեղերի՝ ունենալ ներկայացուցիչ և վարել Ընկերության անունից գրագրություններ.

թ) Ընկերության անունից հավատարմաթղթեր վկայականներ և ստացականներ տալ.

ժ) գնել և ծախել ամեն տեսակ ապրանքներ և կայքեր, նաղդ հաշվով և վարկով, նույնպես և ամենայն տեսակ գործարքների, արձանագրությունների, պայմանագրերի կնքումն և համապատասխան Ընկերու-



թյան անունից մուրհակներ տալ. վարձով և կապալով վերցնել կայք ու շինություններ, ապահովագրել կայքը և այլ տնտեսական գործեր.

ժա) Խորհրդային Անդրկովկասի ՈՍՌ-Ավիախիմ Ընկերության հետ համաձայնեցնել Ընկերության տեղական կազմակերպություններում առաջացած հարցերը. ինչպիսիք են—օդանավերի կառուցման պատվերները, այերոկայանների սարքավորումն ու կազմակերպումը, օդային հաղորդակցությունը, ռազմական, ավիացիոն և քիմիական գործարանների կառուցումը, շեֆային օգնություն ցույց տալը, օժանդակ ձեռնարկների կազմակերպումն և այլն, համաձայն Ընկերության հաստատված ընդհանուր նախագծի, որը նախատեսնված է սույն կանոնադրության 2-րդ կետում:

ժբ) մունիցիպալիզացիայի չենթարկված շինությունները ձեռք բերելը և նրանց կառուցելու համար արձանագրություններ կազմելը.

ժգ) այն բոլոր հարցերի մշակումը, որոնք յենթակա են Ընկերության խորհրդի՝ և համագումարի քննությանը, բացառությամբ այն հարցերի, որոնք Ընկերության խորհրդի և համագումարի որոշումներով կամ սույն կանոնադրությամբ դրված են առանձնապես վերջինների իրավասության ներքո.

ժդ) իր գործողությունների մեջ Ընկերության խորհրդի նախագահությունը ղեկավարվում է սույն կանոնադրությամբ, Ընկերության համագումարի և խորհրդի որոշումներով և Խորհրդային Անդրկովկասի ՈՍՌ-Ավիախիմի (Խորհրդային Միության ՈՍՌ-Ավիախիմ Ընկերությունների Միության) որոշումներով:

§ 35.

*Շտապ դեպքերում, յերբ անհրաժեշտ է կարևոր այն հարցերի շտապ վորոշումը, վորոնք գտնվում են Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի իրավասության տակ, և հիշված են սույն կանոնադրության § 28-ի «գ», «դ» և «յե» կետերում և խորհրդի նիստը գումարելը իր ժամկետին անհնարին է լինելու, վորը պահանջում է գործի էյությունը, նախագահությունը իրավունք ունի անկախ վճռել այդ հարցերը, միայն իր ընդունած վճիռների մասին նա հայտնում է խորհրդին նրա հետևյալ նիստին՝ հաստատելու համար:*

§ 36.

*Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմի Ընկերության համագումարի բոլոր դիրեկտիվների և վորոշումների անմիջական վերամշակման և կյանքի մեջ անցկացնելու համար Ընկերության խորհրդի նախագահության կից կան.*

*ա) քարտուղարություն, նրան ծառայող կազմը այն թվով, վորը Ընկերության խորհրդի նախագահությունն է վորոշում և համաձայնեցրված է Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի ընդհանուր դիրեկտիվների հետ.*

*բ) համապատասխան սեկցիաներ և հանձնաժողովներ՝ Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի անդամներից, վորոնք կարող են Ընկերության ակտիվ անդամներին գործի մեջ քաշել: Սեկցիաներն ու հանձնաժողովները կազմվում են խորհրդի կամ նախագահության հայեցողությամբ:*



Ծանոթություն.—*1) Սեկցիաների ու հանձնաժողովների տեխնիկական աշխատանքները տանում են Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության նախագահության ապարատը և Ընկերության տեղական կազմակերպությունների հետ կապ են ստեղծում միայն նրա քարտուղարության միջոցով:*

Ծանոթություն.—2) *Սեկցիաների ու հանձնաժողովների նախագահներն ու փոխնախագահներ ընտրվում են սեկցիաների ու հանձնաժողովների ընդհանուր ժողովներում և հաստատվում են Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի նախագահության կողմից:*

## V. Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության վերաստուգիչ որգանները.

§ 37.

*Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության ստուգող որգան է հանդիսանում Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության վերաստուգիչ հանձնաժողովը, վորը ընտրվում է 2 տարին 1 անգամ Ընկերության հանրապետական համագումարի այն պատվիրակներից, վորոնք չեն մտնում Ընկերության խորհրդի մեջ, և թիվը վորոշում է համագումարը, բայց 3 անդամից և նրանց 2 թեկնածուներից վոչ պակաս:*

Ծանոթություն. *Վերաստուգիչ հանձնաժողովը կազմվում է հենց իր ընտրվելուց անմիջապես հետո, և իրենց միջից նախագահ և քարտուղար է ընտրում:*

§ 38.

Վերստուգիչ հանձնաժողովը նիստ է ունենում ըստ իր հայեցողության, բայց տարվա ընթացքում 6 անգամից ոչ պակաս, և ստուգման է ենթարկում տարվա ընթացքում երկու անգամից ոչ պակաս Ընկերության բոլոր օրգանները, հիմնարկությունները, ձեռնարկություններն ու կազմակերպություններն կենտրոնում և տեղերում, ինչպես նրանց ֆին-տնտեսական գործունեությունը, նույնպես և աշխատանքի ընդհանուր դրությունը, Ընկերության Միության և Ընկերության բարձրագույն օրգանների տրված դիրեկտիվների իրագործումը և ապարատների աշխատանքը։

Բացի դրանից, Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը ղեկավարում և ուղղում է Ընկերության տեղական կազմակերպությունների վերստուգիչ հանձնաժողովների գործունեությունը։

§ 39.

Իր գործունեության մեջ Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը ղեկավարվում է սույն կանոնադրությամբ, Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի կանոնադրությամբ (և Խորհրդային Միության Ընկերության հանրապետական համագումարների որոշումներով, Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի (Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միության) վարչական օրգանների որոշումներով և Խորհրդային Անդրկովկասի (և Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միության) վերստուգիչ հանձնաժողովների դիրեկտիվներով ու ցուցմունքներով։



§ 40.

Վերստուգիչ հանձնաժողովները իրենց գործունեության մասին հաշիվ են տալիս Ընկերության հանրապետական համագումարի առաջ։

Համագումարների առանցքում, վերստուգիչ հանձնաժողովը իր նիստում բոլոր պակասությունների ու անկանոնությունների մասին հայտնում է Ընկերության խորհրդին կամ նրա նախագահության՝ իր առաջարկների հետ միասին, որոնք ենթակա են պարտադիր քննության և արձանագրության կազմելուն։

Ծանոթություն.— Իր նկատողությունների և առաջարկությունների պատճենները Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը ուղարկում է Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմի վերստուգիչ հանձնաժողովին։

§ 41.

Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամները իրավունք ունեն ներկա լինել Ընկերության խորհրդի նախագահության բոլոր՝ ինչպես բաց, նույնպես և փակ նիստերին, նույնպես և նրա տեղական կազմակերպությունների նիստերին և օգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով։

## VI. Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության տեղական կազմակերպությունները.

§ 42.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության տեղական կազմակերպությունները կարող են կազմակերպվել Ադրբեջանի Հանրապետության ամբողջ տերիտորիայում՝ սույն կանոնադրության § 1-ի հիման վրա՝ Ընկերության տեղական կազմա-

կերպությունների գրանցման, բացման ու փակման գործերը վարում են Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության վերև յիշած ղեկավար օրգանները:

§ 43.

Ընկերության տեղական կազմակերպությունները ստորաբաժանվում են.—ինքնավար-հանրապետական, ինքնավար-շրջանային, գավառ-քաղաքային բաժանմունքների. Ընկերության բջիջները, վորոնք կազմակերպված են կից գործարաններին, ֆաբրիկներին, զինվորական մասերին, պրոֆմիություններին, կոոպերատիվ միություններին, գյուղերին և այլն, վորոնք կազմված են Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության անդամներից, այդ հիմնարկություններում աշխատողներից ու ծառայողներից և այլն:

§ 44.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության տեղական կազմակերպությունները համաձայնեցնում և կիրառում են իրենց գործունեությունը Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության աշխատանքի նախագծին համապատասխան:

Տնտեսական-նյութական մասում Ընկերության տեղական կազմակերպությունները չհանդիսանալով ինքնուրույն իրավական անձնավորություններ, գործում են Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի կամ նրա նախագահության հաստատված նախահաշվի տոկոսային վճարումների սահմաններում, վորը բացատրված է սույն կա-



նոնադրության § 48-ում, և միայն այդ սահմաններում են կրում նյութական պատասխանատվություն:

Ընկերությունները, բաժանմունքները կամ բջիջները յեթե ցանկանում են իրենց մշտական լիազորության սահմաններից դուրս գալ, վորը նախատեսնված է սույն կանոնադրությամբ, պետք է ամեն անգամ առանձին իրավունք ստանան տեղական կազմակերպության վեր յեղած նախագահությունից և յեթե յենթադրվող գործարքը գերազանցում է նրանց լիազորությունից, ապա անպայման Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմի նախագահությունից, վորը հանդիսանում է միակ, լիազոր իրավական անձնավորությունը:

Ծանոթություն.—Տեղական բոլոր կազմակերպություններին արգելվում է մուրհակ տալ: Պայմաններ կնքել արգելվում է 200 ռուբլուց ավելի ինքնավար-հանր.-ինքնավար-շրջան., 100 ռուբլուց ավելի—գավառական և ռայոնական բաժանմունքների համար: Ոժանդակ ձեռնարկներ հիմնելը թույլ է տրվում, բայց նախապես պետք է Ընկերության վերը յեղած կազմակերպության համաձայնությունը ստանալ: Պայմանագրեր կնքել միանգամայն արգելվում է բջիջներին:

Դրա համաձայն Ընկերության տեղական բոլոր կազմակերպությունները Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության աշխատանքի նախագծի հիման վրա մշակում են իրենց աշխատանքի ծրագրերը, ֆինանսական յենթադրություններն ու նախաշիվները, վորոնք յենթակա են Ընկերության

վերև յեղած կազմակերպության հաստատմանը։ Դրամական հաշվետվությունները ու անդամավճարների տոկոսները Ընկերության տեղական կազմակերպությունները ամեն ամիս ներկայացնում են Ընկերության խորհրդի նախագահությանը:

§ 45.

Ընկերության տեղական կազմակերպությունների ղեկավարող օրգաններ են հանդիսանում.

ա) Ընկերության տեղական կազմակերպությունների համագումարները—ինքնավար-հանր. և ինքնավար-շրջանային, և կոնֆերանսները—քաղաքային, գավառային և ռայոնական և այլն: Ներկայացուցչության նորման վորոշում է Ընկերության համապատասխան կազմակերպության խորհուրդը կամ խորհրդի նախագահությունը, նախորոք համաձայնեցնելով Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության խորհրդի կամ խորհրդի նախագահության հետ։

բ) Ընկերության տեղական կազմակերպությունների համագումարները ընտրում են խորհուրդ և վերստուգիչ հանձնաժողով.

գ) Ընկերության տեղական կազմակերպությունների համագումարները իրենց միջից ընտրում են նախագահություն.

դ) բջիջների բյուրոներ և վերստուգիչ հանձնաժողովներ ընտրվում են վերջինների անդամների ընդհանուր ժողովներում։

Ծանոթություն.—Ընկեր. տեղական կազմակերպություն. ղեկավարող ստուգիչ անդամների շրջանը, նման և Ընկերության ղեկավարող և ստուգիչ օրգանների գործունեության այն շրջանին, վորը նախատեսնված է



սույն կանոնադրության IV և V գլուխներում, բայց փոքր շրջանի համապատասխան։

## VII Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության միջոցները.

§ 46.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության միջոցները կազմվում են.

ա) մուտքի անդամավճարներից.

բ) տարեկան անդամավճարներից.

գ) ընդհանուր նվիրատվություններից, հանգանակություններից, տոկոսային հատկացումներից և ուրիշ դրամական մուծումներից.

դ) հատուկ նշանակություն ունեցող նվիրատվություններից, վորը կազմվում է միջոցներ ժողովելու հանրապետական կամպանիաներից.

յե) թռիչքների, դասախոսությունների, համերգների, ներկայացումների, լոտարեյների, ցուցահանդեսների, եքսկուրսիաների, ցույցերի և այլն մուտքերից.

զ) Ընկերության արտադրական գործունեությունից և կայքի շահագործումից ու զանազան ձեռնարկներից ստացված օգուտներից, վորը նախատեսված է սույն կանոնադրության § 2-ում.

է) Ընկերության հրատարակությունների և ապրանքների վաճառումից ստացված գումարներից.

ը) ընկերության դրամագլխի տոկոսներից.

թ) անդամների ինքնատուրքադրումից և

ժ) այլ մուտքերից:

§ 47.

Միջոցներ գտնելու համար՝ Ադրբեջանի Հանրապետության ՈՍՌ-Ավիախիմի Ընկերությունը գործում է՝ ղեկավարվելով սույն կանոնադրության որոշումներով, Ընկերության համագումարների և խորհրդի պլենումի որոշումներով և Խորհրդային Անդրկովկասի ՈՍՌ-Ավիախիմ Ընկերության ղեկավար օրգանների դիրեկտիվային ցուցմունքներով, իսկ Ընկերության տեղական կազմակերպությունները ղեկավարվում են Ադրբեջանի Հանրապետության ՈՍՌ-Ավիախիմ Ընկերության ղեկավար օրգանների դիրեկտիվներով:

§ 48.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՌ-Ավիախիմ Ընկերության և նրա տեղական կազմակերպությունների, հիմնարկությունների և ձեռնարկների գործունեության ընթացքում գոյացող գումարները բաժանվում են դրամագլուխների վրա.

ա) Ադրբեջանի Հանրապետության ՈՍՌ-Ավիախիմ Ընկերության հիմնական կապիտալը կազմվում է մուտքի անդամավճարներից, համաձայն սույն կանոնադրության § 46 «ա» կետի. պահվում է Ադրբեջանի Հանրապետության ՈՍՌ-Ավիախիմի խորհրդի դրամարկղում և Ընկերության կայքերի արժեքից, նրա տեղական կազմակերպությունների հիմնարկներից և ձեռնարկներից ստացված օգուտները.

բ) Ադրբեջանի Հանրապետության ՈՍՌ-Ավիախիմ Ընկերության շրջանառության դրամագլուխը կազմվում է ՈՍՌ-Ավիախիմ Ընկերության այն հասույթներից, որը մուծվում է սույն կանոնադրության § 47 «բ», «գ», «դ», «յե», «զ», «ե», «ի», «թ» կետերի համաձայն.



գ) Ընկերության հատուկ դրամագլուխը կազմվում է այն միջոցներից, որը մուծվում է սույն կանոնադրության § 46 «դ» կետի համաձայն.

դ) Ընկերության հիմնական դրամագլուխը (մուտքի անդամավճարները) ծախսվում է անդամական տոմսերի և դրասենյակային պիտույքներ ձեռք բերելու համար.

յե) Ընկերության շրջանառության դրամագլուխը ծախսվում է պլանային կարգով և ըստ նախահաշիվների, որը հաստատում է Ադրբեջանի Հանրապետության ՈՍՌ-Ավիախիմ Ընկերության համագումարը կամ նրա խորհուրդը Ընկերության համագումարի որոշումով, § 46 «բ» կետի համաձայն ստացված գումարի 15% ամեն ամիս փոխադրվում է Անդրկովկասյան ՈՍՌ-Ավիախիմ:

զ) Ընկերության հատուկ դրամագլուխը ծախսվում է հատուկ նպատակների համար համաձայն իր նշանակության, ամեն անգամ Ադրբեջանի Հանրապետության ՈՍՌ-Ավիախիմ Ընկերության խորհրդի նախագահության հատուկ որոշման հիման վրա, առանց Ընկերության տեղական կազմակերպություններին որևէ տոկոսներ տալու բացառությամբ այնպիսի դեպքերի, որոնք տեղերում պահանջում են արտադրական ծախսեր, որպիսի դեպքերում թողնվող պակասների չափը ամեն անգամ որոշում է Ադրբեջանի Հանրապետության ՈՍՌ-Ավիախիմ Ընկերության խորհրդի նախագահությունը:

Ծանոթություն. — Խորհրդային Միության ՈՍՌ-Ավիախիմ Ընկերությունների

Միության կողմից տարվող կամպանիաներում ժողոված նպատակային նշանակություն ունեցող միջոցները ամբողջովին մըտնում են Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունների Միության դրամարկղը։

Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության կողմից տարվող կամպանիաներում ժողոված նպատակային նըշանակության միջոցները ամբողջովին մտնում են Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության դրամարկղը։

Ծանոթություն. 2) Այն միջոցները, որոնք հավաքվում են սույն կանոնադրության § 46 «ե» կետի համաձայն. ամբողջովին հանձնվում են Խորհրդային Միության ՈՍՈ-Ավիախիմի պարենավորման բաժինը կամ նրա Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության ներկայացուցչին, բացառությամբ տոկոսների, որոնք ամբողջովին թողնվում են Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության և նրա տեղական կազմակերպությունների տրամադրության տակ։

Ծանոթություն. 3) Այն միջոցները, որոնք հավաքվում են սույն կանոնադրության § 46 «յե» կետի համաձայն կազմակերպված համերգներից, դասախոսություններից, ներկայացումներից, կինո-ցուցադրումներից և այլ նման միջոցներից, ամբողջովին մնում են այդ կազմակերպող կազմակերպությունների տրամադրության տակ։

Ծանոթություն. 4) Այն միջոցները, որոնք հավաքվում են սույն կանոնադրու-



թյան § 46-ի «թ» կետի համաձայն, ամբողջովին մնում են Ընկերության ինքնատուրքագրումն կազմակերպող բջիջների տրամադրության տակ։

§ 49.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության տրամադրության տակ գտնվող ազատ գումարների 50%-ը, որը չի ծախսված ըստ սույն կանոնադրության § 48 «բ» կետի բացատրության, մտնում են Անդրկովկասյան ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության կարգադրության տակ, և դրա հետ միասին ուղարկվում է ի գիտություն ամեն տարվա մինչև սեպտեմբերի 30-ը կազմված տարեկան հաշվեկշիռը, համաձայն Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության կանոնադրության § 9 «յե», «ժզ» կետերի, իսկ մնացորդ 50%-ը գործադրվում է Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության հետևյալ տարվա նախահաշվով կազմած արտադրական ծրագրի իրականացման համար։

§ 50.

Հաշվետու տարին համարվում է սույն տարվա դեկտեմբերի 1-ից մինչև հետևյալ տարվա դեկտեմբերի 30-ը։

Ծանոթություն. Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերությունը և նրա տեղական կազմակերպությունները պարտավոր են հաշիվ տալ հրապարակով, որի դեպքում հայտարարելու տեղեկությունների ցուցակը կազմվում է Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության նախագահությունը և համաձայնեցրված է լինում Ադրբեջանի Հանրա-

պետության Ցենժողկոմի, Ռազմածովային Ժողկոմի և Խորհրդային Ադրբեջանի ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության Նախագահության հետ։

## VIII. Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության լիկվիդացիան.

§ 51.

Ադրբեջանի Հանրապետության ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության կամ նրա տեղական կազմակերպությունները փակման հարցը կարող է վճռել ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության հանրապետական հատուկ համագումարը կամ նրա տեղական կազմակերպությունների համագումարին ներկա գտնվող պատգամավորների յերկու-յերրորդական ձայների վճռով, վորը լինելու է Անդրկովկասյան ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության կամ Ադրբեջանի Հանրապետության համապատասխան կառավարչական որգանների պահանջով։

§ 52.

Փակվող Ընկերության ունեցվածքի լիկվիդացիան կատարում է լիկվիդացիոն հանձնաժողովը, վորը նշանակվում է Ընկերության հատուկ համագումարում և համաձայնեցրված է Խորհրդային Ադրբեջանի ՈՍՈ-Ավիախիմի հետ։

§ 53.

Ընկերության և նրա տեղական բոլոր կազմակերպությունների փակման դեպքում, նրա ամբողջ ունեցվածքը Ադրբեջանի Հանրապետության համաձայնությամբ անցնում է Խորհրդային Անդրկովկասի ՈՍՈ-Ավիախիմ Ընկերության կարգադրության տակ։

ՀՍՍՌ-Арм ССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0212321

40.491
303